ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան “ 30 ” սեպտեմբեր 2011թ.

«Հայկական Հանրագիտարան» հրատարակչություն պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Հրատարակչություն»), ի դեմս գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանի, որը գործում է համաձայն Հրատարակչության կանոնադրության, մի կողմից, և «Տեղեկատվական Տեխնոլոգիաների Դպրոց» հիմնադրամը (այսուհետ՝ «ՈՒՀ»), ի դեմս հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Մովսիսյանի մյուս կողմից (միասին «Կողմեր») նպատակ ունենալով նպաստել նորագույն տեխնոլոգիաների միջոցով հայալեզու հանրագիտարանային տեղեկատվության տարածմանը և զարգացմանը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան.

1. ՈՒՀ-ն իրականացնում է Հրատարակչության գործունեության անվճար աջակցություն, այդ թվում՝ տեխնիկական օգնություն և Հրատարակչության կողմից հրատարակվող հանրագիտարանային գրականության զարգացման խթանում:
2. Հրատարակչությունը, հանդիսանալով իր կողմից հրատարակվող հանրագիտարանային գրականության մտավոր սեփականության իրավունքների լիիրավ սեփականատերը,
   - համաձայնվում է, որ սույն պայմանագրի Հավելված 1-ում նշված հրատարակությունների բովանդակությունը (ներառյալ՝ նկարներ և այլ նյութեր) գտնվեն բաց շրջանառության մեջ՝ «Քրիեյթիվ Քոմմոնս Նշում, Համանման տարածում 3.0» (Creative Commons BY-SA 3.0) թույլատրագրի հիման վրա (Կողմերն ընդունում են, որ սույն կետում նշված թույլատրագրի հետագա փոփոխությունների դեպքում որպես հիմք են ընդունվելու փոփոխված թույլատրագրերի դրույթները),
   - հաստատում է, որ որևէ սահմանափակում չի վերապահում վերոնշյալ նյութերի մասով, ներառյալ՝ դրանց օգտագործումը Վիքիպեդիա ինտերնետային հանրագիտարանում (www.wikipedia.org), ինչպես նաև այդ նյութերի հետագա փոփոխումը, զարգացումը և տարածումը (այդ թվում՝ առևտրային նպատակներով):
3. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Կնքված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից:
4. Սույն պայմանագրի կնքման պահից Հրատարակչության և ՈՒՀ-ի միջև կնքված նախորդ համագործակցության պայմանագիրը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր, կողմերի համաձայնությամբ:

Կողմերի հասցեները և վավերապայմանները

Հրատարակչություն	ՈՒՀ
«Հայկական Հանրագիտարան»	“SS Դպրոց” հիմնադրամ
հրատարակչություն ՊՈԱԿ	ՀՀ, ք.Երևան, Քաջազնունի 1
ՀՀ, ք.Երևան, Գրիգոր Լուսավորչի 15	Հեռ. 55-91-26
Հեռ. 52-43-41	
ստորագրություն	ստորագրություն
“ 30 ” սեպտեմբեր 2011թ.	“ 30 ” սեպտեմբեր 2011թ.

«Հայկական Հանրագիտարան» հրատարակչություն պետական ոչ առևտրային կազմակերպության և «Տեղեկատվական Տեխնոլոգիաների Դպրոց» հիմնադրամի միջև 30.09.2011թ. կնքված համագործակցության պայմանագրի

Հավելված 1

1. Հրատարակչության կողմից հրատարակված գրականությունը.

1.1. Հայկական Սովետական Հանրագիտարան, 13 հատոր, ՀՍՀ գլխ. խմբ. 1974-1987թթ.

1.2. Հայկական Համառոտ Հանրագիտարան, 4 հատոր, ՀԽՀ գլխ. խմբ, 1990-2003թթ.

1.3. Հայկական Հարց, 1 հատոր, Հայկական Հանրագիտարանի գլխ. խմբ. 1996թ.

1.4. Հայաստանի Բնաշխարհ, Հայկական Հանրագիտարան հրատ. 2006թ.

1.5. Ով ով է. Հայեր կենսագրական հանրագիտարան, 2 հատոր, Հայկական Հանրագիտարան հրատ. 2005 – 2007թթ.

1.6. Ղարաբաղյան Ազատագրական Պատերազմ 1988-1994 հանրագիտարան, Հայկական Հանրագիտարան հրատ. 2004թ.

1.7. Դպրոցական Մեծ Հանրագիտարան, 4 հատոր, Հայկական Հանրագիտարան հրատ. 2008 – 2010թթ.

1.8. Հայ Սփյուռք հանրագիտարան, 1 հատոր, Հայկական Հանրագիտարան հրատ. 2003թ.

1.9. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, 1 հատոր, Հայկական հանրագիտարանի գլխ. խմբ. 2002թ.

2. Հրատարակչության կողմից ապագայում հրատարակվելիք գրականության բովանդակությունը՝ հրատարակման պահից ոչ շուտ, քան մեկ տարի անց: